

պարանով չափած հողամաս, ուրեմն վիճակ եւս հողամաս է :

Նախ՝ ոչ միայն հողամասը, այլ ամէն գոյք կարող է վիճակ կոչուել, ձեւաւոր ոճով, եթէ վիճակով է ստացուած :

Երկրորդ՝ չի երեւում, որ պ. Մանանդեան ստուգած լինի Հայկազեան բառգրքի կոչումը : Այլապէս ձեռնպահ պիտի մնար արտառոյց եղբակացութիւններէ : Յոյն բառը իրօք դժուարութեան մէջ է դրել Ս. Գրքի հայ թարգմանիչներին : Տեսակ տեսակ բառեր են ընտրել միտքը մի կերպ արտայայտելու : Միայն վիճակ բառը չէ որ տեսնուի ենք schoinismos-ի դէմ, որ աւելի իմաստն է տալիս քան բառը թարգմանում : Մի տեղ գործ է ածուում պարանf (II Թագ. Ը. 2), մի տեղ՝ ապաւանդակf (Ես. ԾԴ. 3), մի ուրիշ տեղ՝ լարաբաժին (Ամովս է 18, Միք. Բ. 5) եւ վերջապէս վիճակ՝ (Յես. Ժէ 15, Եզ. Խէ 13) : Եւ ոչ schoinisma kleronomias է թարգմանում վիճակ ժառանգութեան, այլ եւ kleronomia առանձին, (Եզ. 47, 18) առանց schoinisma բառի :

Զի երեւում որ վիճակ հոդ նշանակէր անկախ հրէական հասկացողութիւնից :

Եթէ արդարեւ վիճակ արմատացած լինէր հայոց մէջ որպէս «համայնական-տոհմական հնազոյն շրջանի տերմին», թարգմանիչները դռն դուռ չէին ընկնել պատշաճաւոր բառ

դռնելու, այլ ամենուրեք կը դնէին վիճակ, նման նահապետ, նախարար խօսուին բառերի :

Անտեղի է յիշել նաեւ Թովմա Արծրունու խօսքը արարների մասին թէ «արկանէին վիճակս եւ լարս ձգէին», ապացուցանելու համար որ լար ու վիճակ ձգելը եղել է հողարաչխի ձեւ նաեւ հայերիս մօտ :

Միամտութիւն կը լինէր կարծել, որ հրէշաւոր Բուդային ուղեկցող արարները հողեր գրաւելու ուրիշ միջոց չունէին քան լարով չափել եւ վիճակ ձգել : Թովմայի խօսքը ոճային սեթեւեթ է եւ ոչ իրական պատկեր, մի ձեւաւոր ասացուածք, առնուած Ս. Գրքից :

Հարկաւ, այս չէ նշանակում որ լարն ու վիճակը ծանօթ չէին հայերին, ինչպէս եւ ծանօթ լինելուց բնաւ չի հետեւում, որ վիճակ տեքնիկ բառ է հողային իմաստով :

Մեղմ խօսելով, «վիճակ»ը շատ աւելի վատ վիճակի մէջ է դնուում քան ակնարկածս երեք բառերը, որոնց տեղն ուզում է բռնել : Բայց եւ այնպէս պ. Մանանդեան կարծում է, որ իր «լեզուական այս նոր դիտողութիւնները» զալիս են հաստատելու «իր ենթադրութիւնը համայնական հողատիրութեան գոյութեան մասին հին Հայաստանում» :

Միշտ նոյն ալելուիան, ծանօթ՝ ընթերցողներին :

(Վերջը յաջորդով)

ԳԵՐՄԱՆ ՃԱՄԲՈՐԴ ՄՈՐԻՑ ՎԱԳՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գրեց՝ ԱՐՏ. ԱՔԵՂԵԱՆ

I

«Հայրենիք»ի ընթերցողները արդէն ծանօթ են գերման ուղեւորներ Հաքտահուգէնի եւ Բողենշտէդտի՝ Հայաստան կատարած ձգտութեանց : Առաջինը, ինչպէս կը յիշէ ընթերցողը, մեր երկիրն է այցելած 1843-ի օգոստոսին, իսկ երկրորդը՝ 1844-ի գարնանը :

1840-ական թուականներին Հայաստան են այցելում եւրոպացի ականաւոր թւրիշ ճամբորդներ եւս, որոնց աշխատութիւնները եւս հանդիսանում են ոչ նուազ արժէքաւոր աղ-

բիւրներ՝ ժամանակակից հայ կեանքը եւ հայ երկիրը ուսումնասիրելու համար :

Այդ ճամբորդների թւում առաջնակարգ տեղ է գրաւում գերման գիտնական Մորից Վագները :

Վերջինս զգալի չափով լրացնում է Հաքտահուգէնի եւ Բողենշտէդտի գործը : Մինչ առաջինը առաւելապէս ընկերաբանի եւ տնտեսագէտի աչքով է դիտել մեր հայրենիքը, իսկ երկրորդը գրադէտի եւ բանահաւաքի, Մորից Վագներ, որպէս բնագէտ եւ աշխարհագրա-